


ՑՈՒՑԱԿԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ցուցական առավելությունները

2

Ցուցական գործընթաց

3

Նախացուցակում

5

Ցուցակում

7

Ցուցական փաստաթղթեր

7

Ցուցական հարթակներ

8

Ցուցական քայլեր

10

Հետցուցակում

13

Ցուցական ծախսեր

14

Միջազգային կազմակերպությունների պարտատոմսերի ցուցակում

16



ՑՈՒՑԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չարգացման ու ընդլայնման հեռահար նպատակներ ունեցող ցանկացած ընկերություն իր գործունեության այս կամ այն փուլում դիտարկում է հանրային դառնալու և արժեթղթեր ցուցակելու գործընթացը: Ավելի քան 18 տարի մենք աջակցում ենք ընկերություններին իրենց զարգացման այս կարևորագույն փուլում:

Ցուցակվելով Հայաստանի ֆոնդային բորսայում՝ Ձեր ընկերությունը՝


- կդառնա գրավիչ հայաստանյան ու օտարերկրյա անհատ ներդրողների ու կազմակերպությունների համար, քանի որ ցուցակված ընկերությունը համապատասխանում է Բորսայի կանոններով սահմանված չափանիշներին, ինչը նրան դարձնում է հուսալի: Ավելին, ցուցակված ընկերությունը գործում է կորպորատիվ կառավարման սկզբունքներին համաձայն, ինչը լրացուցիչ վստահություն է ստեղծում ներդրողների ու հանրության համար:
- հնարավորություն կունենա ընդլայնելու գործունեությունն ու սկսելու նոր նախագծեր՝ ներգրավելով անսահմանափակ այլընտրանքային ֆինանսավորում:
- կբարելավի կորպորատիվ արժեքը և ապրանքանիշի հեղինակությունը - տեղական և օտարերկրյա լրատվամիջոցների (այդ թվում՝ Bloomberg և Thomson Reuters տեղեկատվական համակարգերի) կողմից ընկերության վերաբերյալ տեղեկատվության լուսաբանումը օգնում է այն դարձնել ճանաչելի հայաստանյան և օտարերկրյա ներդրողների համար:
- կդառնա ավելի գրավիչ աշխատաշուկայի ամենաարհեստավարժ հատվածի համար - բաժնետոմսերի գնման նախագծերը (employee stock options) ընկերությունում աշխատելու մոտիվացիա են ստեղծում և գրավում են աշխատաշուկայի լավագույններին:
- կառաջարկի ներդրումների օպերատիվ վերադարձի հնարավորություն (ընկերությունից դուրս գալու հնարավորություն՝ exit) ներդրողների (բաժնետերերի) համար - արժեթղթերի իրացվելի շուկան ներդրողներին հնարավորություն է տալիս ցանկացած պահի վաճառել իրենց արժեթղթերը Բորսայում ձևավորված շուկայական գնով:




ՑՈՒՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

(բաժնետոմսեր)


ՆԱԽԱՑՈՒՑԱԿՈՒՄ



ՑՈՒՑԱԿՈՒՄ




ՀԵՏՑՈՒՑԱԿՈՒՄ




- 1 Ընկերություն
- 2 Խորհրդատու
- 3 Բորսա
- 4 ՀԿԴ
- 5 Պետական ռեգիստր

ՑՈՒՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ (պարտատոմսեր)

ՑՈՒՑԱԿՈՒՄ



ՀԵՏՑՈՒՑԱԿՈՒՄ



1 Ընկերություն **2** Խորհրդատու **3** Բորսա

ՆԱԽԱՑՈՒՑԱԿՈՒՄ

Հայաստանի ֆոնդային բորսայում կարող եք ցուցակել ինչպես Ձեր ընկերության բաժնետոմսերն, այնպես էլ պարտատոմսերը: Ընդ որում, ցուցակման կարող են ներկայացվել միայն ազատ շրջանառության ենթակա արժեթղթերը:

«ՓԲԸ» և «ՍԴԸ» կազմակերպաիրավական կառուցվածք ունեցող ընկերությունները բորսայում բաժնետոմսեր (բաժնային արժեթղթեր) ցուցակելու համար պետք է վերակազմակերպվեն բաց բաժնետիրական ընկերության: Ի դեպ, վերակազմավորվող ընկերության պարտատերերի պահանջների բավարարման դեպքում, վերակազմավորված իրավաբանական անձի պետական գրանցումը տևում է 2 օր:

Արժեթղթերը ցուցակման ներկայացնելիս Դուք՝ որպես Թողարկող պետք է բավարարեք հետևյալ հիմնական պայմաններին.

Պայման	Բաժնետոմսերի ցուցակում	Պարտատոմսերի ցուցակում
1. Թողարկողը պետք է լինի հրապարակային ընկերություն	X	
2. Թողարկողի գործունեությունը, տնտեսական և իրավական կարգավիճակը չպետք է վտանգեն ներդրողի շահերը	X	X
3. Պաշտոնական ինտերնետային կայքի առկայություն	X	X
4. Նախորդ մեկ տարվա ընթացքում ղեկավար կազմի զգալի փոփոխությունների բացակայություն	X	X
5. Առնվազն երեք անդամից բաղկացած տնօրենների կամ դիտորդ խորհուրդ	X	X
6. Հրապարակված կանոնադրություն, որտեղ չկա արժեթղթերի նկատմամբ իրավունքների իրացման որևէ խոչընդոտ	X	X
7. Կորպորատիվ կառավարման կանոնագրքի ընդունում և կիրառում	X	X
8. Թողարկողի կառավարման մարմինների գործունեության, ներքին տեղեկությունների գաղտնիության պահպանման և դրանց բացահայտման գործընթացի, ինչպես նաև իր ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից մասնակիցների կողմից իր արժեթղթերով գործարքներ կնքելու գործընթացը կարգավորող ներքին կանոնների առկայություն	X	X

2, 5, 7 և 8 կետերի պահանջները չեն պարտադրվում ազատ շուկայում (C, Cbond) արժեթղթերի առևտրին թույլատրման համար:



ՆԱԽԱՑՈՒՑԱԿՈՒՄ

Ցուցակման ներկայացված արժեթղթերը պետք է համապատասխանեն հետևյալ պայմաններին.

Պայման	Բաժնետոմսեր	Պարտատոմսեր
Ոչ թղթային, ազատ շրջանառության ենթակա	X	X
Արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառում Կենտրոնական դեպոզիտարիայում	X	X
*Հրապարակված առևտրի ազդագիր	X	X
*Ցուցակման ներկայացված է արժեթղթերի ողջ շրջանավոր մասը	X	X

*Նշված պայմանների բացառությունները սահմանված են
«Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման»
կանոնների 3-րդ գլխի 9-րդ կետի 4-րդ ենթակետում:



ՑՈՒՑԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Ցուցական դիմելիս նախնառաջ պետք է սկսեք նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթերը: Ներկայացվող փաստաթղթերի ամբողջական ցանկը և ցուցական գործընթացի մանրամասները կարող եք գտնել [«Արժեթղթերի ցուցական և առևտրին թույլատրման»](#) կանոններում: Լրացուցիչ հարցերի դեպքում կարող եք դիմել Բորսայի ցուցական բաժին:

Ցուցական գլխավոր փաստաթուղթ է համարվում ազդագիրը: Ազդագիրը թողարկողի և առաջարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն պարունակող փաստաթուղթ է: Տարբերում են ազդագրի հետևյալ տեսակները՝

Թողարկում/Տեղաբաշխում

Թողարկման
ազդագիր

Ծրագրային
ազդագիր



Բորսայական առևտուր

Առևտրի ազդագիր

Թողարկման ազդագիր - մշակվում և գրանցվում է արժեթղթերի թողարկման/տեղաբաշխման ժամանակ, նախատեսված է ոչ շարունակական տեղաբաշխումների համար:

Ծրագրային ազդագիր - մշակվում և գրանցվում է արժեթղթերի թողարկման/տեղաբաշխման ժամանակ, նախատեսված է շարունակական տեղաբաշխումների համար:

Առևտրի ազդագիր - մշակվում և գրանցվում է արժեթղթերի՝ բորսայական առևտրին թույլտվություն ստանալու համար:


Եթե Դուք արժեթղթերի ցուցական/առևտրին թույլատրման հայտ ներկայացնեք Բորսա արժեթղթերի տեղաբաշխման ավարտից հետո **5 աշխատանքային օրվա** ընթացքում, ապա առևտրի ազդագրի փոխարեն կարող եք ներկայացնել թողարկման կամ ծրագրային ազդագիրը:



ՑՈՒՑԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ

Ցուցակման ժամանակ արժեթղթերն ընդգրկվում են համապատասխան հարթակներում՝ ըստ դրանց համար սահմանված պայմանների բավարարման:

Բաժնետոմսեր



	A (Հիմնական ցուցակ)	B (Երկրորդային շուկա)	C (Ազատ շուկա)
Ազդագիր*	×	×	×
Բաժնետոմսերի շուկայական արժեք	1 մլրդ ՀՀ դրամ	500 մլն ՀՀ դրամ	-
Գործունեության նվազագույն ժամանակ	3 տարի	3 տարի	-
Դրական տարեկան զուտ շահույթ	Վերջին 3 տարին	-	-
Բաժնետերերի նվազագույն քանակ	100	-	-
Բաժնետոմսերի ազատ շրջանառող մաս**	15%	10%	-
Տարեկան/միջանկյալ հաշվետվությունների տարածում	×	×	×
Շուկա ստեղծող***	Նվգ. 1	-	-
Տնօրեններ կամ դիտորդ խորհրդի անդամներ	Նվգ. 3 անդամ	Նվգ. 3 անդամ	


* Ազդագիր կամ ԿԲ կանոնակարգ 4/04-ին համապատասխան շահագրգիռ ներդրողներին հասանելի այլ փաստաթուղթ:

** Բաժնետոմսերի ազատ շրջանառվող մասը (free float) բաժնետոմսերի այն մասն է, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի պատկանում թողարկողի կառավարման մարմինների անդամներին, նշանակալից և խոշոր սեփականատերերին, թողարկողի դուստր ընկերություններին կամ պետությանը:

*** Շուկա ստեղծողը (market maker) բորսայի անդամ է, որը նպաստում է արժեթղթերի իրացվելիության բարձրացմանը՝ շարունակական գնման և վաճառքի գնանշումներ ապահովելով բորսայի առևտրային համակարգում:



Պարտատոմսեր



	Abond (Հիմնական ցուցակ)	Bbond (Երկրորդային շուկա)	Cbond (Ազատ շուկա)
Ազդագիր	×	×	×
Անվանական ծավալ*	500 մլն. ՀՀ դրամ 1.2 մլն ԱՄՆ դոլար 1 մլն Եվրո	250 մլն. ՀՀ դրամ 625 հազ. ԱՄՆ դոլար 500 հազ. Եվրո	100 մլն. ՀՀ դրամ 250 հազ. ԱՄՆ դոլար 200 հազ. Եվրո
Գործունեության նվազագույն ժամանակ	3 տարի (2-ը հիմնական գործունեության)	2 տարի	-
Տարեկան/միջանկյալ հաշվետվությունների հրապարակում	×	×	×
Շուկա ստեղծող	Նվգ. 1	-	-
Տնօրենների կամ դիտորդ խորհուրդ	Նվգ. 3 անդամ	Նվգ. 3 անդամ	-

Կարճաժամկետ պարտատոմսեր կարող են թույլատրվել առևտրի միայն Cbond ազատ շուկայում:

* Այլ արժույթով արտահայտված պարտատոմսերի դեպքում՝ դրամային պարտատոմսերի ծավալին համապատասխան՝ հաշվարկված առևտրին թույլտվության ներկայացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:



ՑՈՒՑԱԿԱՆ ԶԱՅԼԵՐ

1

Ցուցական/առևտրին թույլատրման որոշում

Ընկերության կառավարման լիազորված մարմնի որոշումը՝ ցուցական կամ առևտրին թույլատրման հայտով Բորսա դիմելու վերաբերյալ:

2

Ազդագրի մշակում

Ընկերությունը կարող է ինքնուրույն մշակել ազդագիրը կամ դիմել շուկայի մասնագիտացված մասնակցի (խորհրդատու):

3

ԿԲ-ում ազդագրի գրանցում՝

Ստավելագույնը 20 աշխատանքային օր

Ազդագրի գրանցման հայտ և

- ազդագիրը՝ մեկ օրինակից և ազդագրի տեքստի էլեկտրոնային տարբերակը
- թողարկողի կանոնադրության պատճենը
- պետական տուրքի վճարման անդորրագիրը
- Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր

4

Ազդագրի գրանցման որոշման տրամադրում

Ստավելագույնը 3 աշխատանքային օր

Կենտրոնական բանկն ազդագրի գրանցման մասին որոշումը տրամադրում է էլեկտրոնային հաղորդագրության ձևով:



Ցուցական փաստաթղթերի* ներկայացում Հայաստանի ֆոնդային բորսա (թղթային և էլեկտրոնային տարբերակով)

1. ցուցական հայտը
2. ցուցական վերաբերյալ թողարկողի իրավասու մարմնի որոշումը
3. ազդագիրը (ներառյալ ազդագրի գրանցման մասին ՀՀ ԿԲ որոշում)
4. թողարկողի կանոնադրությունը, դրա փոփոխությունները և լրացումները
5. արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) մասին որոշումը
6. միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները
7. Նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը
8. տեղեկություններ թողարկողի ղեկավար անձնակազմի վերաբերյալ
9. տեղեկություններ արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառումն իրականացնող անձանց վերաբերյալ
10. արժեթղթերին տարբերակիչ ծածկագիրը կամ այլ համարժեք կոդը
11. տեղեկատվություն Շուկա ստեղծողի և վերջինիս հետ կնքված պայմանագրի հիմնական պայմանների վերաբերյալ
12. արժեթղթերի տեղաբաշխողի հետ կնքված գործող բոլոր պայմանագրերը կամ այլ համաձայնությունները
13. պարտատոմսերի հետ կապված եկամուտների վճարումների ժամանակացույցը և եկամտաբերության հաշվարկման բանաձևը
14. բաժնետոմսերի սեփականատերերի ցուցակը և հանրությանը պատկանող բաժնեմասի չափի վերաբերյալ տեղեկանքը
15. տեղեկատվություն թողարկողին ուղղակիորեն կամ անուղղակիորեն հսկող անձանց վերաբերյալ
16. տեղեկատվություն թողարկողի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրերի վերաբերյալ
17. այլ փաստաթղթեր՝ թողարկողի հայեցողությամբ:

Մինչև փաստաթղթերը ներկայացնելը թողարկողը պետք է վճարի Բորսայի «Սակագների մասին» կանոններով սահմանված ցուցական մեկանգամյա չփոխհատուցվող վճարը

* Եշված տեղեկատվությունը/փաստաթղթերը ներկայացվում են Բորսա, եթե դրանք ներառված չեն ազդագրում կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթում կամ արդեն իսկ չեն ներկայացվել Բորսա: Եթե թողարկողը հայտի ներկայացման պահին չունի ցուցակված արժեթուղթ, ապա պետք է ներկայացնի նաև Կանոնների 62-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը:



ՑՈՒՑԱԿԱՆ ԶԱՅԼԵՐ

6

Ցուցական/առևտրին թույլատրման որոշման կայացում

3-6 ամիս

Բորսան կարող է՝

- բավարարել ցուցական հայտը՝ արժեթղթերն ընդգրկելով թողարկողի նշած հարթակ
- բավարարել ցուցական հայտը՝ արժեթղթերն ընդգրկելով այլ՝ առավել համապատասխան հարթակ
- մերժել ցուցական հայտը

7

Բորսայի հետ պայմանագրի կնքում

Ցուցական որոշման կայացումից հետո, մինչև դրա ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրը ներառյալ

- թողարկողը պետք է Բորսայի հետ կնքի ցուցական ենթակա արժեթղթերի առևտրին թույլտվության պայմանագիր
- թողարկողը պետք է վճարի արժեթղթերի ցուցական պահպանման վճարը

8

Արժեթղթերն առևտրին թույլատրում

Ցուցական որոշման կայացումից հետո 3-րդ աշխատանքային օրը:

- Ցուցական որոշումն ուժի մեջ է մտնում դրա կայացման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը
- Մինչև ցուցական որոշման ուժի մեջ մտնելը պետք է հրապարակված լինի ցուցակվող արժեթղթերի ազդագիրը (կամ ներդրողների համար նախատեսված այլ փաստաթուղթը)

■ Անհրաժեշտության դեպքում Բորսան կարող է լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություն պահանջել:

■ Հայտին և դրան կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները սահմանված են [«Արժեթղթերի ցուցական և առևտրին թույլատրման» Կանոնների 14-րդ գլխում:](#)

Ազդագրի փոխարեն շահագրգիռ ներդրողներին ներկայացվող այլ փաստաթղթի նկատմամբ պահանջները սահմանված են «Արժեթղթերի ցուցական և առևտրին թույլատրման»

Կանոնների 63-րդ կետով:



ՀԵՏՑՈՒՑԱԿՈՒՄ

Ցուցակումից հետո Ձեր ընկերությունը և ցուցակված արժեթղթերը պետք է շարունակեն համապատասխանել Նախացուցակման բաժնում նշված պահանջներին, իսկ Դուք պետք է իրականացնեք Բորսայի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման» կանոններով սահմանված համապատասխան տեղեկության բացահայտումը:

Ցուցակման պահպանման պահանջները	Բաժնետոմսեր			Պարտատոմսեր		
	A	B	C	Abond	Bbond	Cbond
Բաժնետերերի ռեեստրի ներկայացում (տարեկան)	×	×				
Հանրությանը պատկանող բաժնեմասի չափի վերաբերյալ տեղեկության ներկայացում (ամսական)	×	×				
Կորպորատիվ կառավարման հաշվետվության հրապարակում (ամսական)	×	×				
Տարեկան, միջանկյալ հաշվետվությունների և Էական փաստերի ներկայացում. <i>ցանկացած անձի պահանջի դեպքում նշված փաստաթղթերի տրամադրում</i>	×	×	×	×	×	×
Սեփականության իրավունքի ամրագրման համար անհրաժեշտ պայմանների ապահովում	×	×	×	×	×	×
Ցուցակման պահպանման համար սահմանված վճարների կատարում	×	×	×	×	×	×
Տարեկան/միջանկյալ հաշվետվությունների տարածում	×	×	×	×	×	×
Առնվազն տարեկան աուդիտորական ստուգման ապահովում	×	×	×	×	×	×
Օրենքի և Բորսայի կանոնների պահպանում	×	×	×	×	×	×
Բորսայի պահանջով լրացուցիչ տեղեկության և փաստաթղթերի բացահայտում	×	×	×	×	×	×



ՑՈՒՑԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

(բաժնետոմսեր առանց ԱԱՀ-ի)

Ցուցական մեկանգամյա չփոխհատուցվող վճար

	A	B	C
Բաժնետոմսերի ցուցակում	800,000 ՀՀ դրամ + ԲԹԾ* 0.02% (առավ. 3,000,000 ՀՀ դրամ)	400,000 ՀՀ դրամ + ԲԹԾ 0.02% (առավ. 1,500,000 ՀՀ դրամ)	50,000 ՀՀ դրամ + ԲԹԾ 0.02% (առավ. 100,000 ՀՀ դրամ)
Արդեն ցուցակված բաժնետոմսերի նոր թողարկման ցուցակում	400,000 ՀՀ դրամ + ԲԹԾ 0.02% (առավ. 1,000,000 ՀՀ դրամ)	200,000 ՀՀ դրամ + ԲԹԾ 0.02% (առավ. 1,000,000 ՀՀ դրամ)	25,000 ՀՀ դրամ + ԲԹԾ 0.02% (առավ. 100,000 ՀՀ դրամ)

Ցուցական պահպանման եռամսյակային վճար

	A	B	C
Ցուցական պահպանման վճար	450,000 ՀՀ դրամ + ԲԹԾ 0.0075% ԲԹԾ >2 մլրդ ՀՀ դրամ 600,000 ՀՀ դրամ + ԲԹԾ` 2 մլրդ ՀՀ դրամը գերազանցող մասի 0.0035%	300,000 ՀՀ դրամ + ԲԹԾ 0.0075% ԲԹԾ >1 մլրդ ՀՀ դրամ 375,000 ՀՀ դրամ + ԲԹԾ` 1 մլրդ ՀՀ դրամը գերազանցող մասի 0.0035%	45,000 ՀՀ դրամ + ԲԹԾ 0.0075% ԲԹԾ >0.6 մլրդ ՀՀ դրամ 90,000 ՀՀ դրամ + ԲԹԾ` 0.6 մլրդ ՀՀ դրամը գերազանցող մասի 0.0035% (առավ. 450,000 ՀՀ դրամ)

* ԲԹԾ - բաժնետոմսերի թողարկման ծավալ:



ՑՈՒՑԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (պարտատոմսեր առանց ԱԱՀ-ի)

Ցուցական մեկնագամյա չփոխհատուցվող վճար

	Abond	Bbond	Cbond
Թողարկողը չունի ցուցակված բաժնետոմսեր	300,000 ՀՀ դրամ	150,000 ՀՀ դրամ	50,000 ՀՀ դրամ
Թողարկողի բաժնետոմսերն արդեն ցուցակված են	150,000 ՀՀ դրամ	75,000 ՀՀ դրամ	25,000 ՀՀ դրամ

Ցուցական պահպանման եռամսյակային վճար

	Abond	Bbond	Cbond
Թողարկողը չունի ցուցակված բաժնետոմսեր	150,000 ՀՀ դրամ + ՊԱԾ 0.0025% ** (առավ. 225,000 ՀՀ դրամ)	75,000 ՀՀ դրամ + ՊԱԾ 0.0025% (առավ. 150,000 ՀՀ դրամ)	45,000 ՀՀ դրամ + ՊԱԾ 0.0025% (առավ. 90,000 ՀՀ դրամ)
Թողարկողի բաժնետոմսերն արդեն ցուցակված են	50% զեղչ	50% զեղչ	50% զեղչ

** ՊԱԾ - պարտատոմսերի շրջանառության մեջ գտնվող անվանական ծավալ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

ՑՈՒՑԱԿՍԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԶԱՅԼԵՐՈՎ

* Նշված տեղեկատվությունը/փաստաթղթերը ներկայացվում են Բորսա, եթե դրանք ներառված չեն ազդագրում կամ ներդրողներին հասանելի այլ փաստաթղթում կամ արդեն իսկ չեն ներկայացվել Բորսա:



Թողարկողին ներկայացվող պայմաններ

Եթե Ձեր ընկերությունը ընդգրկված է Կենտրոնական բանկի կողմից սահմանված միջազգային կազմակերպությունների ցանկում, ապա Ձեզ վրա տարածվում են թողարկողին ներկայացվող պահանջների 2-րդ և 6-րդ կետերը միայն:

1

Ցուցակման փաստաթղթերի* ներկայացում Հայաստանի ֆոնդային բորսա (թղթային և էլեկտրոնային տարբերակով)

- ցուցակման հայտը
- ազդագիրը (ներառյալ ազդագրի գրանցման մասին ՀՀ ԿԲ որոշում)
- արժեթղթերի թողարկման և արժեթղթերի ցուցակման հետ կապված փաստաթղթերի ստորագրման իրավունք ունեցող անձանց իրավասությունները հավաստող փաստաթղթերը
- արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը կամ այլ համարժեք կոդը
- պարտատոմսերի հետ կապված եկամուտների վճարումների ժամանակացույցը և եկամտաբերության հաշվարկման բանաձևը
- այլ փաստաթղթեր՝ թողարկողի հայեցողությամբ:

Մինչև հայտը ներկայացնելը թողարկողը պետք է վճարի ցուցակման մեկանգամյա չփոխհատուցվող վճարը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՑՈՒՑԱԿՍԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

2

Ցուցակման/առևտրին թույլատրման որոշման կայացում

Բորսան կարող է՝

- բավարարել ցուցակման հայտը՝ արժեթղթերն ընդգրկելով թողարկողի նշած հարթակ
- բավարարել ցուցակման հայտը՝ արժեթղթերն ընդգրկելով այլ՝ առավել համապատասխան հարթակ
- մերժել ցուցակման հայտը

Որոշումը կայացվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3

Բորսայի հետ պայմանագրի կնքում

- թողարկողը պետք է Բորսայի հետ կնքի ցուցակման ենթակա արժեթղթերն առևտրին թույլատրման պայմանագիր
- թողարկողը պետք է վճարի արժեթղթերի ցուցակման պահպանման վճարը

Ցուցակման որոշման կայացումից հետո, մինչև դրա ուժի մեջ մտնելու օրվան նախորդող օրը ներառյալ:

4

Արժեթղթերն առևտրին թույլատրում

- Արժեթղթերն առևտրին թույլատրման որոշումն ուժի մեջ է մտնում դրա կայացման օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը
- Մինչև ցուցակման որոշման ուժի մեջ մտնելը պետք է հրապարակված լինի ցուցակվող արժեթղթերի ազդագիրը (կամ ներդրողների համար նախատեսված այլ փաստաթուղթը)



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ

Միջազգային կազմակերպությունների թողարկած պարտատոմսերի ցուցակման ժամանակ թողարկողի համար սահմանված են տեղեկության բացահայտման հետևյալ պահանջները:


Ցուցակման պահպանման պահանջները	Պարտատոմսեր		
	Abond	Bbond	Cbond
Անկախ աուդիտորական եզրակացությամբ հաստատված տարեկան ֆինանսական հաշվետվությունները	×	×	×
Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները	×	×	×
Արժեթղթերի, արժեթղթերի տեղաբաշխման, երկրորդային շուկայում շրջանառության, արժեթղթերի մարման կարգի, տոկոսագումարների/ մարման գումարների վճարումները կատարող անձանց, արժեթղթերից բխող իրավունքների և դրանց հաշվառման, ինչպես նաև ստացվող եկամուտների հարկման կարգի վերաբերյալ տեղեկության փոփոխությունները	×	×	×
Սեփականության իրավունքի ամրագրման համար անհրաժեշտ պայմանների ապահովում	×	×	×
Ցուցակման պահպանման համար սահմանված վճարների կատարում	×	×	×
Օրենքի և Բորսայի կանոնների պահպանում	×	×	×

Նշված տեղեկությունը թողարկողը պետք է հրապարակի իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ միաժամանակ տեղեկացնելով Բորսային նշված տեղեկության հրապարակման մասին:

■
Հայտին և դրան կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները սահմանված են [«Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման» կանոնների 14-րդ գլխում:](#)

Ազդագրի փոխարեն շահագրգիռ ներդրողներին ներկայացվող այլ փաստաթղթի նկատմամբ պահանջները սահմանված են «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման» **Կանոնների 63-րդ կետով:**





Հայաստանի ֆոնդային բորսայի առաքելությունն է՝

- խթանել Հայաստանի տնտեսության զարգացումը
- նպաստել գործարար գրավիչ միջավայրի կայացմանը
- մշակել պարզ, հուսալի և թափանցիկ ներդրումային մեխանիզմներ Հայաստանի և օտարերկրյա ներդրողների համար
- ընդլայնել կազմակերպությունների կողմից կապիտալի ներգրավման հնարավորությունները:

Հեռ.՝ +374 60 69 55 55
Էլ. հասցե՝ info@amx.am

Հրաժարագիր: Այս ուղեցույցի նյութը կրում է տեղեկատվական և մարքեթինգային բնույթ և նախատեսված չէ ապահովելու իրավական, հարկային, հաշվապահական, ներդրումային կամ մասնագիտական խորհրդատվություն, հետևաբար չի կարող օգտագործվել որպես այդպիսին: